## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ շահագրգիռ մարմինների առարկությունների և առաջարկությունների**

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը¸<br>Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը | Առարկության/ առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունները |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1. | ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Գրիգորյան<br>04.04.2018թ. | 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝<br>1) 15.2-րդ հոդվածի վերնագրում «հասկացություններ» բառը լրացնել «ը» որոշիչ հոդով:<br>2) 15.3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերից հանել «կարաոկեն, դիսկոտեկը, հեստապարային ակումբը, սաունան, բաղնիքը և շոգեբաղնիքը» բառերը:<br>2. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի | **Ընդունվել է**<br><br>**Ընդունվել է** | Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | «օբյեկտների» բառից հետո հանել «կարաոկեն, դիսկոտեկը, հեստապարային ակումբը, սաունան, բաղնիքը և շոգեբաղնիքը» բառերը:<br>3. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի լրացնել 41. 1-րդ կետի և 45-րդ հոդվածի 1-ին մասի լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետի «օբյեկտների» բառից հետո հանել. «կարաոկեն, դիսկոտեկը, հեստապարային ակումբը, սաունան բաղնիքը և շոգեբաղնիքը» բառերը:<br>4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 180-րդ հոդվածի 5-6-րդ մասերի «օբյեկտների» բառից հետո հանել . «(ռեստորաններ, սրճարաններ, բարեր և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ)» և «կարաոկեն, դիսկոտեկը, հեստապարային ակումբը, սաունան բաղնիքը և շոգեբաղնիքը» բառերը:<br>5. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի`<br>1) 9-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի «օբյեկտների» բառից հետո հանել. «կարաոկեն, դիսկոտեկը, հեստապարային ակումբը, սաունան բաղնիքը և շոգեբաղնիքը» բառերը:<br>2) 12-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«19) համայնքի տարածքում սահմանափակման | Ընդունվել է<br><br>Ընդունվել է | Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝<br><br>ա. Կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տաս հազարից մինչև քսան հազար ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքում՝ երեսուն հազարից մինչև հիսուն հազար ՀՀ դրամ.<br><br>բ. Հեստապարային ակումբի համար, օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքում՝ երեք հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար ՀՀ դրամ»: | **Ընդունվել է**<br><br>**Ընդունվել է** | Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Ընդունվել է | Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |